

Ռուբինեանց թագաւորօրհնէից մէջ եւս, որ թէպէտեւ լատիներենէ թարգմանուած՝ բայց մեր մէջ գործածական էր, կը յիշուին պարգեւներ՝ զորս յետ ընթրեաց կուտար նորապսակ արքայն: Ոսկեսար կամ արծաթասար երիվարը, որով հանդիսապէս մեկնած էր եկեղեցիէն, կը շնորհէր սպարապետին (գունդատապլ), հալաւ եւ ոսկեղէն զօտի մը՝ թագադրին, իւր գործածած ոսկեղէն կամ արծաթի սկուտղն ու դգալը՝ տաճարապետին (սինեսկալ), ոսկի կամ արծաթ դաշտիշոնն ու դասպրիկը՝ սենեկապետին (Չամբուլայ), որ սեղանին սկիզբը ջուր ւցեր էր արքային ձեռաց վրայ, ոսկեղէն կամ արծաթեայ «գուրն եւ զքսեստին», որ են թակոյկն ու սափոր, զինէպետին (պօղլեր), եւ բուլոր միւս պաշտօնէից «տայ շնորհս ըստ կամաց իւրոց»: Կը պատուիրէ՝ որ թագուհին ալ տայ «շնորհս» իրեն սպասաւորող տիկնանց (Սխ. 475): Չեմ կարծեր՝ թէ պարգեւատրութիւնը լոկ պսակման ընթրեաց հետ կապուած լինի Ռուբինեան արքունեաց մէջ, եւ միւսներէն վտարուած:

Նոյն իսկ սրբոյն Ներսեսի իւր կոչնական աղքատաց ազուցած հանդերձն ալ, զոր տեսանք (աստ, 152), արդիւնք հա-